

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՍՏԵՂ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### ՎԱՐՅԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ներկայիս դատավարագիտությանը հայտնի են վերաքննության տարբեր մոդելներ կամ տեսակներ: Իրավաբանական գրականության մեջ վերաքննության դասակարգման հիմքում տարբեր չափանիշներ են դրվում: Վերաքննությունը կարող է լինել **անհատական կամ համատեղ, սկզբնական կամ միանալու միջոցով** (դատավարության այլ մասնակցի կողմից բողոքին միանալու միջոցով), **գլխավոր կամ հանդիպակաց** (պատահական, երբ գործին մասնակցող անձը իրականացնում է հանդիպակաց բողոքարկում)<sup>1</sup>:

Վերաքննության վերոնշյալ տեսակների առանձնացման հիմքում ընկած են վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտների կողմից առաջին ատյանի դատարանի ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու պահանջով վերաքննիչ դատարան դիմելու ձևն ու տրամաբանությունը: Սակայն, մեր կարծիքով, վերաքննության այս տեսակների տարանջատումը գործնական և տեսական կարևոր նշանակություն ունենալ չի կարող, և ավելին՝ ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) պայմաններում այն վերաքննության տեսակի տարանջատման չափորոշիչ համարելն իմաստագուրկ է: Չնայած՝ որոշ դեպքերում դրանք վերաքննության կարգով դատական ակտի վերանայման դատավարական առանձնահատկությունների բնութագրման համար կարող են որոշակի նշանակություն ունենալ:

ՀՀ դատավարության օրենքը թույլ է տալիս առանձնացնելու անհատական կամ համատեղ վերաքննությունը, որը ենթադրում է հայցվորի (ակտիվ) կամ պատասխանողի (պասիվ) կողմում դատակցության պարագայում համահայցվորի (համահայցվորների) կամ համապատասխանողի (համապատասխանողների) կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտի միաժամանակյա բողոքարկումը: Այսպես, ՀՀ ՔԴՕ 30 հոդվածի համաձայն՝ հայցը կարող է հարուցվել մի քանի հայցվորի կողմից համատեղ կամ ընդդեմ մի քանի պատասխանողների: Հայցվորներից և պատասխանողներից յուրաքանչյուրը դատավարությունում հանդես է գալիս ինքնուրույն (ՔԴՕ հոդվ. 30, մաս 2): Վերոգրյալը նշանակում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերը վերաքննության կարգով կարող են դատակիցների կողմից բողոքարկվել և՛ անհատապես, և՛ համատեղ:

<sup>1</sup> Տե՛ս **Фурсов Д. А., Харламова И. В.** Теория правосудия в кратком трехтомном изложении по гражданским делам. Том второй: «Гражданское судопроизводства как форма отправления правосудия». М., 2009, էջ 486:

Ընդ որում, խոսքը վերաբերում է թե՛ դատարանի որոշումներին, թե՛ վճիռներին, քանի որ դատավարության օրենքով սահմանափակում չի դրվում դատարանի՝ միջանկյալ և գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման հարցում: Բացի այդ, ՔԴՕ 30 հոդվածում խոսքը մի քանի հայցվորների կողմից համատեղ կամ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելու մասին է, մինչդեռ դատակցությունը հնարավոր է նաև գործի քննության ընթացքում, երբ դատարանի կողմից գործի քննությանը ներգրավվում են այլ սուբյեկտներ: Մասնավորապես, երբ դատարանը չի կարող լուծել վիճելի իրավահարաբերության մասնակիցներից մեկի իրավունքների և պարտականությունների հարցը առանց նույն իրավահարաբերության մնացած սուբյեկտների իրավունքներին և պարտականություններին անդրադառնալու (պարտադիր դատակցություն): Օրինակ, թե հայցապահանջները բխում են միևնույն հիմքից (մի քանի անձանց կողմից համատեղ վնաս պատճառելու հայցերով), և հայցվորը հայցը հարուցել է ոչ բոլոր պարտավոր անձանց դեմ, իսկ նրա պահանջները չեն կարող քննվել առանձին, ապա դատարանը պարտավոր է այդ բոլոր անձանց ներգրավել դատավարությանը: Դատական պրակտիկայում դատավարությանը ներգրավվում են նաև համահայցվորները<sup>2</sup>, երբ վիճելի նյութական իրավահարաբերությունների բնույթից բխում է վերջիններիս մասնակցությամբ գործի քննության անհրաժեշտությունը, և դատարանի կողմից նշված անձանց դատավարությանը մասնակից չդարձնելը կոդիվի որպես գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճռի կայացում, որը դատական ակտի բեկանման հիմք է: Օրինակ՝ ընդհանուր սեփականությունից բաժինն անջատելու կամ ընդհանուր սեփականությունը բաժանելու վերաբերյալ գործերը կարող են քննվել միայն բոլոր համասեփականատերերի մասնակցությամբ: Խոսքը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայցի առարկան ընդհանուր իրավունքն է: Պետք է նշել սակայն, որ հայցվորի կողմում դատակցության կիրառումը պետք է իրականացվի տնօրինչականության սկզբունքի պահանջները հաշվի առնելով, որը ենթադրում է իրավունքի սուբյեկտի կողմից իր քաղաքացիական և դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ տնօրինելու հնարավորությունը:

Համատեղ կամ անհատապես բողոքարկումը հնարավոր չէ գործի քննությանը ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց մասնակցեցելու, ինչպես նաև՝ ոչ պատշաճ կողմի փոխարինման կանոնների կիրառման պարագայում: Այսպես, ՀՀ ՔԴՕ 34 հոդվածի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, իսկ նույն օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացառությամբ հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու կամ հաշտության համաձայնություն կնքելու և

<sup>2</sup> Տե՛ս «ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՔԴ/1449/02/08 03.12.2010 որոշումը»:

դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքից: Ինչպես տեսնում ենք, դատավարության օրենքը երրորդ անձանց օժտել է դատական ակտերը բողոքարկելու հավասար իրավունքով: Սակայն, ի տարբերություն դատակցության, ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի և կողմերի շահերը դատավարությունում չեն համընկնում, ուստի գործնականում հնարավոր չէ նաև դատական ակտի համատեղ բողոքարկումը: Հարկ է նշել, որ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը դատավարությունում հանդես է գալիս կա՛մ պատասխանողի, կա՛մ հայցվորի կողմում, և գործնականում կողմի հետ համատեղ կարող է բողոքարկել առաջին ատյանի դատարանի դատական ակտը, հատկապես, երբ ՀՀ դատավարության օրենքը համատեղ բողոքարկման արգելք չի սահմանում:

Ինչ վերաբերում է ոչ պատշաճ կողմի փոխարինման կանոնների կիրառմանը, ապա՝ եթե ոչ պատշաճ հայցվորը համաձայն չէ դուրս գալու վարույթից, և անձը, որին պատկանում է պահանջի իրավունքը, գործին մասնակցում է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ (ՔԴՕ հոդվ. 31, մաս 2), որից բխում է դատավարության այս մասնակիցների շահերի հակասությունը, կամ երբ հայցվորը համաձայն չէ պատասխանողին ուրիշ անձով փոխարինելուն, և դատարանը այդ անձին մասնակից է դարձնում որպես երկրորդ պատասխանող (ՔԴՕ հոդվ. 31, մաս 3), ապա այս դեպքում ևս սկզբնական և երկրորդ պատասխանողների շահերի միջև ընդհանրություն չի ենթադրվում:

Կարող ենք ասել, որ անհատական վերաքննությունը գործին մասնակցող անձի վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումն է, իսկ համատեղ վերաքննությունը՝ գործի քննությանը համատեղ հանդես եկող անձանց (դատակիցների, ինչպես նաև հայցվորի կամ պատասխանողի և դրանց կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց) վերաքննիչ բողոքների հիման վրա իրականացվող վերաքննությունն է:

Հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ համատեղ վերաքննության առանձնացման համար հիմնականում որպես հիմք է ընդունվում գործին մասնակցող անձանց կողմից դատական ակտի համատեղ բողոքարկման հետևանքով դատական ակտի վերանայումը, մինչդեռ, վերոնշյալ հանգամանքը համատեղ վերաքննություննը բնորոշելու համար բավարար չէ:

***Մեր կարծիքով, համատեղ վերաքննության պարագայում որոշիչ է բողոքարկողների նույն պահանջով հանդես գալը:*** Ինչպես գիտենք, վերաքննիչ բողոք բերողը բողոքում կարող է ներկայացնել տարբեր պահանջներ (դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու, դատական ակտը մասնակիորեն բեկանելու, դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու պահանջ և այլն): Համատեղ վերաքննությունն առկա է բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք (դատակիցները կամ կողմը և ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք) վերաքննիչ

բողոքներում նշել են նույն պահանջը: Այսինքն՝ համատեղ վերաքննությունն առկա է նաև, երբ վերոնշյալ անձանց՝ երկու կամ ավելի բողոքներով վերաքննիչ դատարանին ներկայացվել է նույն պահանջը:

Համատեղ վերաքննության ներկայացված տարբերակի գործնական նշանակությունը և դատավարական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գործին մասնակցող անձինք, բողոքում ներկայացնելով նույն պահանջը, կարող են տարբեր հիմքեր և հիմնավորումներ նշել: Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում (ՔԴՕ հոդվ. 219, մաս 1) և պարտավոր է անդրադառնալ գործով քննության առարկա վերաքննիչ բողոքների բոլոր հիմքերին և հիմնավորումներին: Ոստի, հնարավոր է, որ վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձի բողոքում նշված հիմքերն ու հիմնավորումները դատական ակտը բեկանելու համար դիտի ոչ բավարար, միաժամանակ բավարար համարելով գործին մասնակցող մյուս անձի բողոքի հիմքերն ու հիմնավորումները, որի հետևանքով բավարարվեն բոլոր բողոքարկողների իրավական ակնկալիքները և նրանք հասնեն միևնույն արդյունքի:

Մեր կարծիքով, **համատեղ վերաքննության պարագայում պարտադիր չէ, որ բողոքարկողները վերաքննիչ բողոքի հիմքում դնեն նույն հիմքերն ու հիմնավորումները:** Անհրաժեշտ է տարբերել համատեղ բողոքարկումը համատեղ վերաքննությունից: Համատեղ բողոքարկման պարագայում գործին մասնակցող անձինք հանդես են գալիս ոչ միայն նույնական պահանջով, այլև բողոքի հիմքում դնում են նույն հիմքերն ու հիմնավորումները: Ընդ որում, ՀՀ ՔԴՕ վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով ձևականորեն համատեղ բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, քանի որ օրենսգրքի 210 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվել է, որ վերաքննիչ բողոքում պետք է նշվի բողոք բերող անձի պահանջը, իսկ բողոք բերող *անձանց* (ընդգծումը մերն է՝ Վ. Հ.) պահանջը նշելու և նույն բողոքով համատեղ հանդես գալու մասին խոսք չկա: Չնայած, մեր կարծիքով, երկու և ավելի անձանց ստորագրությամբ վերաքննիչ բողոքը ՔԴՕ 210 հոդվածի կանոնները չպահպանելու հետևանքով վերադարձնելու կարիք չկա, և դատական պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ վերաքննիչ դատարանը վարույթ է ընդունել պատասխանողի և վերջինիս կողմում հանդես եկող՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի համատեղ վերաքննիչ բողոքը<sup>3</sup>:

Այն դեպքում, երբ գործին մասնակցող անձինք հանդես են եկել համատեղ բողոքով, նշելով ընդհանուր պահանջ, հիմքեր ու հիմնավորումներ, համատեղ վերաքննության մասին խոսելն ավելորդ է կամ, լավագույն դեպքում, համատեղ վերաքննությունը կրում է ձևական բնույթ և զուրկ է որևէ գործնական և տեսական նշանակությունից: Հարկ է նշել նաև, որ համատեղ բողոքարկումը և համատեղ վերաքննությունը բովանդակային առումով չեն համընկնում: Բացի այն, որ վերաքննիչ բողոքարկումը և վե-

<sup>3</sup> Տե՛ս «ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի ՎԴ 3-1843 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին 12.26.2008 թ. որոշումը»:

րաքննությունը դատավարական տարբեր կատեգորիաներ են, վերաքննիչ բողոքով համատեղ (նույն պահանջով, հիմքերով և հիմնավորումներով) հանդես գալու դեպքում վերաքննիչ դատարանում քննության առարկա է մեկ բողոք, մինչդեռ, մեր կարծիքով, համատեղ վերաքննությունն առկա է քաղաքացիական գործով դատական ակտի դեմ բերված մեկից ավելի բողոքների քննության պարագայում:

Համատեղ վերաքննիչ բողոքարկման հետևանքով իրականացվող վերաքննությունը կարող է որոշակի դատավարական հետաքրքրություն ներկայացնել այն դեպքում, երբ վերաքննիչ բողոք բերողներից որևէ մեկը, համաձայն չլինելով դատարանի որոշման հետ, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների հիմքով բողոքարկի դատական ակտը: Նման պայմաններում վերաքննիչ դատարանի որոշման իրավական հետևանքները կլինեն ընդհանուր և կարող են վերաբերել նաև վերաքննիչ բողոք չներկայացրած անձանց: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը: Այս դեպքում հայցը հարուցվում է իրավաբանական անձի դեմ, իսկ վնաս պատճառողը պատասխանողի կողմում հանդես է գալիս որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ, քանի որ գործով կայացվող դատական ակտը հետագայում կարող է ազդել իր իրավունքների և պարտականությունների վրա, և ինքնուրույն օգտվում է դատական ակտի թե՛ վերաքննիչ, թե՛ վճռաբեկ բողոքարկման իրավունքներից: Դիցուք, եթե իրավաբանական անձի դեմ ներկայացված հայցը դատարանի կողմից բավարարվել է, իսկ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը վերաքննիչ բողոք է բերում առաջին ատյանի դատարանի վճռի դեմ (օրինակ՝ վկայակոչում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի 2-րդ կամ 4-րդ կետը, այն է՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե վնասը պատճառվել է տուժողի խնդրանքով կամ համաձայնությամբ), ապա վճիռն ամբողջությամբ բեկանելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը հավասարապես վերաբերում է նաև պատասխանողին: Նույնը կարող ենք ասել նաև վերաքննիչ բողոքը մերժելու և առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բեկանելու վերաբերյալ, երբ վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայվել է պատասխանողի և ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի վերաքննիչ բողոքների հիման վրա:

Հետևաբար, համատեղ վերաքննության արդյունքում կայացված դատական ակտը բեկանելու մասին որոշման իրավական հետևանքները հավասարապես կարող են վերաբերել նաև բողոք չբերած անձանց, ինչպես նաև ազդել վերջիններիս իրավունքների և պարտականությունների վրա:

Համատեղ վերաքննությունը բխում է նաև ՀՀ ՔԳՕ 215 հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից, որի համաձայն՝ եթե վերաքննիչ բողոքն ըն-

դունված է վարույթ, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին, եթե *վճիռը չեն բողոքարկել այլ անձինք* (ընդգծումը մերն է՝ Վ. Յ.): Եթե վճիռը բողոքարկել են այլ անձինք, ապա վերաքննիչ վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով: ***Այսինքն՝ դատավարության օրենքն ուղղակիորեն նախատեսում է վերաքննիչ դատարանի կողմից միևնույն վարույթի շրջանակներում մի քանի անձանց վերաքննիչ բողոքների համատեղ քննություն, որը վկայում է ինչպես համատեղ, այնպես էլ հանդիպակաց վերաքննությունների գոյության մասին:***

Սակայն հանդիպակաց վերաքննության կապակցությամբ առկա են ուշադրության արժանի որոշ նկատառումներ: Նախ և առաջ, իրավաբանական գրականության մեջ գլխավոր կամ հանդիպակաց վերաքննությունների տարանջատումը, մեր կարծիքով, պետք է համարել խիստ պայմանական, ավելին, ՀՀ օրենսդրության հիման վրա ընդհանրապես հնարավոր չէ որոշել, թե վերաքննիչ բողոքարկման հիման վրա իրականացվող որ վերաքննությունն է գլխավոր, իսկ որը՝ հանդիպակաց: Այսպես, ՀՀ ՔԴՕ 207 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի): Սրանից հետևում է, որ օրենքով սահմանված ժամկետում գործին մասնակցող անձանց կողմից վերաքննիչ բողոք բերելու դեպքում գործնականում անհնար է որոշել, թե որ բողոքն է գլխավոր, իսկ որը՝ հանդիպակաց, ինչի հիման վրա էլ հնարավոր կլինի որոշել գլխավոր և հանդիպակաց վերաքննությունները: Վերաքննիչ դատարանը պարտավոր է հավասարապես անդրադառնալ գործով ներկայացված բոլոր վերաքննիչ բողոքների հիմքերին և հիմնավորումներին, ինչպես նաև դրանցում ներկայացված պահանջներին: Ինչպես գիտենք, արդար դատաքննության իրավունքը հավասարապես պաշտպանության է ենթակա բոլոր դատական ատյաններում, որը ենթադրում է ինչպես հավասարության պայմաններում գործի քննություն, այնպես էլ կողմերի իրավահավասարություն ու շնորհիվ մրցակցության սկզբունքի՝ սեփական դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն: Ուստի, վերաքննիչ դատարանը պարտավոր է իրավական գնահատական տալ և կոնկրետ եզրահանգումներ անել գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքների (ներկայացված պահանջների, բողոքի հիմքերի և հիմնավորումների) վերաբերյալ:

**Գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ-ն ուղղակիորեն թույլ չի տալիս առանձնացնել գլխավոր վերաքննությունը:**

Մինչդեռ, ՔԴՕ նորմերի վերլուծությունից, որպես վերաքննության տեսակ, կարող ենք առանձնացնել հանդիպակաց վերաքննությունը: ***Հանդիպակաց վերաքննությունն առկա է բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք, որոնց շահերը քաղաքացիական դատավարությունում պոխբացառում են, իրականացնելով իրենց վերաքննիչ բողոքարկման իրավունքը, ներկայացրել են միմյանց տրամաբանորեն հակառակ պահանջներ:*** Նման իրավիճակ հնարավոր է այն դեպքե-

րում, երբ առաջին ատյանի դատարանի վճռից դժգոհ են միաժամանակ և՛ հայցվորը, և՛ պատասխանողը կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք: Դիցուք, եթե առաջին ատյանի դատարանը հայցվորի պահանջները բավարարել է մասնակիորեն, իսկ պատասխանողը գտնում է, որ դատարանն ընդհանրապես դրանք չպետք է բավարարեր (վեճը ենթակա չէ դատարանում քննության), ապա հայցվորը վերաքննիչ բողոքում կարող է ներկայացնել դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու կամ ուղղակի բեկանելու պահանջ, իսկ պատասխանողը կարող է վերաքննիչ դատարանից պահանջել ամբողջությամբ բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը: Այսինքն՝ վերաքննիչ բողոք բերող անձանց պահանջները տրամաբանորեն հակասում են միմյանց: Ընդ որում, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ դատարանի վճռից դժգոհ կողմերը, իրականացնելով վերաքննիչ բողոքարկում, ներկայացնեն նույնական պահանջ: Օրինակ՝ հայցվորը, դժգոհ մնալով իր պահանջները մասնակիորեն բավարարելու վերաբերյալ դատարանի վճռից, կարող է ներկայացնել դատական ակտը մասնակիորեն բեկանելու պահանջ այն դեպքում, երբ պատասխանողը նույնպես ներկայացնում է դատական ակտը մասնակիորեն բեկանելու և գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու պահանջ: Այս դեպքում ևս առկա է հանդիպակաց վերաքննություն: Մասնավորապես, երբ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում և, օրենքով սահմանված կարգով մասնակի բեկանելով դատական ակտը, բեկանված մասով գործն ուղարկում է ստորադաս դատարան՝ նոր քննության, չբեկանված մասով վճիռը մնում է օրինական ուժի մեջ (ՀՀ ՔԴՕ հոդվ. 221, մաս 1, կետ 2): Այսինքն՝ գործին մասնակցող անձանց վերաքննիչ բողոքները վերաբերում են գործն ըստ էության լուծող դատական ակտի տարբեր մասերին և ակնկալում են իրավական տարբեր հետևանքներ՝ մի դեպքում՝ դատական ակտի՝ հայցային պահանջները մասնակիորեն մերժող մասի բեկանում, մյուս դեպքում հայցային պահանջները մասնակիորեն բավարարող մասի բեկանում:

Սրանից հետևում է, որ հանդիպակաց վերաքննությունն առկա է նաև այն դեպքերում, երբ դատավարության կողմերը (գործին մասնակցող անձինք) վերաքննիչ բողոքներում նշել են նույնական պահանջներ, սակայն դրանք տրամաբանորեն բացառում կամ հակասում են միմյանց:

**Գտնում ենք, որ հանդիպակաց վերաքննության հիմքում պետք է դնել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջների հակասությունը, միմյանց բացառելու տրամաբանությունը, որը քննության առարկա պետք է դառնա վերաքննիչ վարույթի շրջանակներում:**

Չի կարելի ճիշտ համարել այն միտքը, թե հանդիպակաց վերաքննության ժամանակ անհրաժեշտ է, որ բողոք բերողները ներկայացնեն իրենց բնութոյով տարբեր պահանջներ: Նրանք կարող են հանդես գալ նույնական պահանջով, սակայն դրանք տրամաբանորեն բացառեն կամ հակասեն միմյանց: Ընդ որում, հանդիպակաց վերաքննությունը բնութագրելիս մեր կողմից «նույնական պահանջ» (այլ ոչ թե «նույն պահանջ») բառակա-

պակցությունն օգտագործվում է այն նկատառումով, որ վերաքննիչ բողոքներում նշված պահանջները թեև ձևականորեն կամ արտաքննապես կարող են համընկնել, սակայն բովանդակային առումով միմյանց չհամապատասխանել, քանի որ վերաբերում են միևնույն դատական ակտի տարբեր մասերի, և բողոքում ներկայացված պահանջների միջև կարող է առաջանում է տրամաբանական հակասություն: Ընդ որում, գործնականում անհնար է, որ հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցները հանդես գան նույն պահանջով, օրինակ՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ խախտվում է գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքը: Դատավարության մասնակիցների շահերի միջև առկա հակասությունը բացառում է նույն պահանջով հանդես գալու հնարավորությունը, քանի որ վերաքննիչ բողոքարկման տրամաբանությունը հանգում է գործին մասնակցող անձի ընկալմամբ իր համար անբարենպաստ հետևանքներ պարունակող դատական ակտի (դրա մի մասի) դեմ վերաքննիչ բողոք բերելուն: Վճիռը չի կարող միաժամանակ ամբողջությամբ հակասել և՛ հայցվորի, և՛ պատասխանողի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական դատավարությունը արգելող և ՀՀ ՔԴՕ 109 հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը կայացնում է գործի վարույթը կարճելու մասին վճիռ: Այս դեպքում, եթե գործին մասնակցող անձինք գտնում են, որ դատարանը հրաժարվում է գործով արդարադատություն իրականացնելուց, որն իր հերթին խախտում է վերջիններիս դատական պաշտպանության իրավունքը, ապա իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքներում կարող են հանդես գալ նույն պահանջով, այն է՝ ամբողջությամբ բեկանել գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատարանի վճիռը: Ընդ որում, նույն իրավիճակն առկա է նաև առաջին ատյանի դատարանի կողմից գործի վարույթը մասամբ կարճող վճիռի բողոքարկման պարագայում, երբ վերաքննիչ բողոք բերողները պահանջում են մասնակիորեն բեկանել դատական ակտը (դատական ակտի նույն մասը) և գործը համապատասխան մասով ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Այն դեպքում, երբ հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցները վերաքննիչ բողոքներում ներկայացնում են նույն պահանջները, գործ ունենք համատեղ վերաքննության հետ:

Հանդիպակաց վերաքննություն առկա չէ նաև գործին մասնակցող անձի կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու պարագայում: ՀՀ ՔԴՕ 212 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, վերաքննիչ բողոքի պատճենն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան և գործին մասնակցող անձանց: Ընդ որում, ՀՀ ՔԴՕ 212 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ վերաքննիչ բողոքի պատասխանում պետք է նշվեն նաև վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ դիրքորոշումը և դրա հիմնավորումները: Վերաքննիչ դատարանը պարտավոր է հավասարապես անդրադառնալու թե՛ վերաքննիչ բողո-



քի, թե՛ բողոքի պատասխանում ներկայացված դիրքորոշման հիմքերին և հիմնավորումներին, և ՀՀ ՔԴՕ 220 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն նաև վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջը, վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները: Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնողն ըստ էության առարկուն է վերաքննիչ բողոքի, դրանում ներկայացված հիմքերի և հիմնավորումների, այլ ոչ թե առաջին ատյանի դատարանի վճռի դեմ. այս դեպքում պատասխան ներկայացնողը դատական ակտի իրավաչափությունը չի վիճարկում:

Վերաքննիչ բողոքի պատասխանով գործին մասնակցող անձը վերաքննիչ դատարան ստորադաս դատարանի դատական ակտի վերանայմանն ուղղված պահանջ (դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու կամ ՔԴՕ 221 հոդվածով նախատեսված որևէ դատավարական գործողություն կատարելու վերաբերյալ) չի ներկայացնում: Վերոգրյալը բխում է վերաքննիչ բողոքի պատասխանի ձևն ու բովանդակությունը սահմանող՝ ՔԴՕ 212 հոդվածի բովանդակությունից, որտեղ, ի տարբերություն բողոքի բովանդակությունը սահմանող նորմերի, վերաքննիչ ատյանին ուղղված պահանջ նշելու վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակվում:

Հետևաբար, վերաքննիչ բողոքի պատասխանն ուղղված չէ առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայմանը, քանի որ այն վերաքննության հիմք չէ (վերաքննության հիմքը վերաքննիչ բողոքարկումն է), ուստի այս պարագայում հանդիպակաց (համատեղ) վերաքննության մասին խոսելն ավելորդ է: Պատահական չէ, որ ՔԴՕ 215 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վճիռը բողոքարկել են այլ անձինք, ապա վերաքննիչ վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով, իսկ ակնհայտ է, որ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելը դատական ակտի բողոքարկում չի հանդիսանում:

**Գործող իրավակարգավորման պայմաններում հանդիպակաց վերաքննությունը կիրառելի է միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի (վճիռների) վերանայման պարագայում:**

Հանդիպակաց վերաքննությունը միջանկյալ դատական ակտերի վերանայման պարագայում կիրառելի չէ, քանի որ գործնականում անհնար է միջանկյալ դատական ակտի վերաբերյալ վերաքննիչ բողոքներում գործին մասնակցող անձանց կողմից տրամաբանորեն փոխբացառող պահանջների ներկայացումը: Այսպես, դատական ակտը, որով ըստ էության չի լուծվում գործը, կայացվում է որոշման ձևով (ՀՀ ՔԴՕ հոդվ. 144, մաս 1) և ուղղված է քաղաքացիական գործի հարուցման, գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և վճիռների կատարման ընթացքում ծագող միջանկյալ դատավարական բնույթի հարցերի լուծմանը: Առաջին ատյանի դատարանի որոշումների իրավական գործողությունը սկսվում է դրանց ընդունման կամ կայացման պահից (ՀՀ ՔԴՕ հոդվ. 144<sup>1</sup>),

հետևաբար, միջանկյալ դատական ակտերը դատավարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ներգործող ակտեր են: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է միջանկյալ դատական ակտի վերաքննություն, գործին մասնակցող անձինք կարող են դրանց դեմ սահմանված կարգով և ժամկետներում վերաքննիչ բողոք բերել, ներկայացնելով միջանկյալ դատական ակտերի վերաքննության մասով ՀՀ վերաքննիչ դատարանի լիազորություններին համապատասխանող պահանջ, այն է՝ կայացնել նոր դատական ակտ կամ վերացնել առաջին ատյանի դատարանի որոշումը (ՀՀ ՔԴՕ 221 հոդվածի 2-րդ մաս և 221<sup>3</sup>-րդ հոդվածի 3-րդ մաս): Այստեղից բխում է, որ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում գործնականում անհնար է տրամաբանորեն փոխբացառող պահանջների ներկայացումը, քանի որ օրենսգրքով սահմանված է դրանք բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը և դատավարական կարգը: Օրինակ՝ եթե գործին մասնակցող անձը ներկայացնում է միջանկյալ դատական ակտը վերացնելու և նոր ակտ կայացնելու պահանջ, ապա միանգամայն անտրամաբանական է մյուս կողմի՝ դատական ակտն ուժի մեջ թողնելու պահանջը, քանի որ այն արդեն իրավական գործողության մեջ է:

Սովորաբար միջանկյալ դատական ակտերն անբարենպաստ իրավական հետևանքներ են պարունակում դատավարության կոնկրետ մասնակցի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, և դրանք վերանայվում են *անհատական* վերաքննության կարգով: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ դատարանի որոշմամբ կարող են խախտվել և՛ հայցվորի, և՛ պատասխանողի, ինչպես նաև երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այսպես, ՀՀ ՔԴՕ 103 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են հայցն առանց քննության թողնելու հիմքերը (այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարությամբ առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքով վեճի վերաբերյալ գործ, կամ կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել): Եթե դատարանը հայցը թողնում է առանց քննության, ապա գործով դադարում է քաղաքացիական դատավարությունը, ինչի հետևանքով չի իրականացվում գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքը: Ընդ որում, ՀՀ ՔԴՕ 104 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք հայցն առանց քննության թողնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող են բողոքարկել վերաքննիչ դատարան՝ հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում<sup>4</sup>: Դատական

<sup>4</sup> ՀՀ ՔԴՕ 104 հոդվածի 3-րդ մասն ամրագրելով գործին մասնակցող անձանց՝ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը, անհավասար պայմաններ է ստեղծել բողոքարկման իրավունքի իրականացման համար: Այսպես, հոդվածում նշվել է «հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում» արատահայտությունը, իսկ որոշումը պատասխանողին կամ երրորդ անձանց ուղարկելու մասին որևէ խոսք չկա: Հոդվածի շարադրանքից պարզ չէ, թե պատասխանողը և երրորդ անձինք ինչպես պետք է տեղեկանան որոշման բովանդակության և հայցվորի կողմից այն ստանալու հանգամանքի մասին, որպեսզի սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք բերեն: Սրանից հետևում է, որ հայցն առանց քննության թողնելու մա-

պրակտիկայում հնարավոր են դեպքեր, որ գործի քննության և վճռի կայացման հարցում շահագրգռված լինեն և՛ հայցվորը, և՛ պատասխանողն ու երրորդ անձինք: Տվյալ դեպքում հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով կարող են բողոքարկել կողմերը, ընդ որում՝ վերաքննիչ դատարան ներկայացնելով նույն պահանջը, այն է՝ վերացնել հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը, քանի որ ՔԴՕ 104 հոդվածի 3<sup>1</sup>-րդ մասի ուժով հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը վերացվելու դեպքում վարույթը համարվում է վերսկսված<sup>5</sup>: Հետևաբար, այս պարագայում գործին մասնակցող անձինք միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքներում ներկայացնում են նույն պահանջները, որոնք վերաքննիչ դատարանի կողմից ենթակա են քննության, ուստի առկա է համատեղ վերաքննություն:

Համատեղ վերաքննությունը կարող է կիրառվել առաջին ատյանի դատարանի թե՛ միջանկյալ, թե՛ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման պարագայում:

ՀՀ դատավարության օրենքը միանալու միջոցով վերաքննիչ բողոքարկման հնարավորություն չի նախատեսում, հետևաբար՝ սկզբնական և միանալու միջոցով վերաքննության մասին խոսելն իրավակարգավորման ներկայիս պայմաններում ավելորդ է: Հարկ է նշել, որ ՀՀ 1964 թ. ՔԴՕ-ն նախատեսում էր բողոքին միանալու ինստիտուտը, որի 289 հոդվածի համաձայն՝ դատավարության մասնակցի կողմում հանդես եկող դատակիցները, երրորդ անձինք կարող են միանալ վերջինիս կողմից բերված բողոքին: Բողոքին միանալու վերաբերյալ հայտարարության համար պետական տուրք չի գանձվում:

Մեր կարծիքով, միանալու միջոցով վերաքննությունը որպես վերաքննության հատուկ տեսակ առանձնացնելու անհրաժեշտություն ընդհանրապես չկա: Նախ և առաջ, այս պարագայում վերաքննիչ բողոքարկման իրավունքը և վերաքննությունը նույնացվում են: Գիշտ է, վերաքննությունը պետության կողմից երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության,

---

սին որոշումը բողոքարկելու իրական հնարավորությունն օրենքով երաշխավորվել է միայն հայցվորի համար: Մինչդեռ, հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը հավասարապես շոշափում է գործին մասնակցող բոլոր անձանց դատավարական իրավունքները: Առաջարկում ենք ՔԴՕ 104 հոդվածի 3-րդ մասում «հայցվորի կողմից» արտահայտության փոխարեն օգտագործել «գործին մասնակցող անձանց կողմից» բառակապակցությունը, որով կսահմանվի որոշումը գործին մասնակցող բոլոր անձանց ուղարկելու՝ դատարանի պարտականությունը:

<sup>5</sup> Օրինակ՝ առաջին ատյանի դատարանը գործի քննության ժամանակ պարզում է, որ կողմերի միջև առկա է վեճն արբիտրաժային դատարանին հանձնելու մասին համաձայնություն և հայցը թողնում է առանց քննության, մինչդեռ, կողմերից որևէ մեկը հղում չէր կատարել արբիտրաժային համաձայնության վրա: ՀՀ ՔԴՕ 103 հոդվածի 3-րդ կետը հայցն առանց քննության թողնելու հիմք է համարել արբիտրաժային համաձայնության վրա կողմերից մեկի կատարած հղումը: Ստացվում է, որ արբիտրաժային համաձայնության առկայությունը դեռևս չի վկայում հայցվորի մոտ դատարան դիմելու իրավունքի արգելքի մասին, և դատարանը պետք է այս դեպքում գործի քննությունն իրականացնի մինչև վերջ և վճիռ կայացնի: Սրանից հետևում է, որ, արբիտրաժային համաձայնության վրա հղում չկատարելով, կողմերը նախընտրում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական ձևը, որին համապատասխանում է գործն օրենքով սահմանված կարգով քննելու և լուծելու՝ դատարանի պարտականությունը:

այդ թվում՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացմանն ուղղված կառուցակարգ է, սակայն այս երկու հասկացությունները չեն նույնանում: *Վերաքննությունը վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելուն ուղղված՝ վերաքննիչ դատարանի և դատավարության մասնակիցների գործունեությունն է:* Վերաքննիչ բողոքն առաջին ատյանի դատարանի ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու վերաբերյալ վերաքննիչ դատարանին ուղղված պահանջ է: Ընդ որում, միանալու միջոցով վերաքննության հիմնական առանձնահատկություն կարելի է համարել արդեն իսկ բերված բողոքին, դրանում ներկայացված պահանջին, հիմքերին և հիմնավորումներին միանալու հնարավորությունը:

Մեր կարծիքով, բոլոր այն դեպքերում, երբ բողոքին միացող անձինք միանալու (փաստացի բողոքում ներկայացված պահանջին միանալու) հայտարարության մեջ ներկայացնում են այնպիսի հիմքեր և հիմնավորումներ, որոնք նշված չեն գործով բերված սկզբնական վերաքննիչ բողոքում, ապա միանալու միջոցով բողոքարկման հնարավորության մասին խոսելն ավելորդ է: Այս պարագայում վերոնշյալ սուբյեկտները պետք է հանդես գան ինքնուրույն և ներկայացնեն առանձին վերաքննիչ բողոք: Նման իրավիճակում քաղաքացիական գործով վերաքննությունն առանձնանում է նրանով, որ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ առանձին-առանձին չի անդրադառնում գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված պահանջին, քանի որ վերջիններս ընդունել են գործով ներկայացված սկզբնական բողոքում տեղ գտած թե՛ պահանջը, թե՛ դրա հիմքերն ու հիմնավորումները:

Համատեղ վերաքննության պարագայում պարտադիր է, որ վերաքննիչ բողոքներում նշված պահանջները նույնը լինեն և տրամաբանորեն չբացառեն միմյանց, սակայն բողոքի հիմքերն ու հիմնավորումները հնարավոր է, որ տարբերվեն միմյանցից: Իսկ միանալու միջոցով վերաքննության միակ առանձնահատկությունն այն է, որ վերաքննիչ բողոքին միացողներն ընդունում են թե՛ սկզբնական բողոքում ներկայացված պահանջները, թե՛ դրա հիմքերն ու հիմնավորումները:

Գտնում ենք, որ միանալու միջոցով վերաքննությունն առանձնացնելու կարիք չկա, և գործնականում ավելի ճիշտ է խոսել միանալու միջոցով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման մասին: Ընդ որում, 1964 թ. ՔԴՕ 289 հոդվածը բողոքարկման այս ձևի համար պարտադիր պայման էր սահմանում այն, որ սկզբնական բողոքին միանալու վերաբերյալ հայտարարություն տվողները հանդես գան դատավարության նույն կողմում, այսինքն՝ վերջիններիս շահերը չբացառեն միմյանց կամ դրանց միջև ակնհայտ հակասություն չլինի: Այդ իսկ պատճառով սկզբնական բողոքին միանալու իրավունքը վերապահվում է գործին մասնակցող բոլոր անձանց, բացառությամբ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի, որը դատավարությունում հադես է գալիս ինքնուրույն:

Գործող ՔԴՕ-ն վերաքննիչ բողոքին միանալու հնարավորություն չի նախատեսում, հետևաբար, սկզբնական բողոքին միանալու ձևով վերա-

քննիչ բողոքարկման և վերաքննության այս տեսակի իրավակարգավորման առանձնահատկությունների և հիմնախնդիրների մասին խոսելը տեղին չէ: ՀՀ գործող ՔԴՕ-ն վերաքննիչ բողոք բերելու համար, ըստ անձանց շրջանակի, սահմանում է կոնկրետ ժամկետներ (ՔԴՕ հոդվ. 207), վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացնում է կոնկրետ պահանջներ (ՀՀ ՔԴՕ հոդվ. 210), որոնք միասնական ձևով նախատեսում են վերաքննիչ բողոքարկման կարգը ՀՀ-ում: Ընդ որում, ՔԴՕ 210 հոդվածը, որպես բողոքի բովանդակությանը ներկայացվող պարտադիր պայման, նշում է բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև վերաքննիչ դատարանին ներկայացվող պահանջը: Հետևաբար, վերաքննիչ դատարանում քննության առարկա են դառնում բողոքում ներկայացված պահանջը, դրա հիմքերն ու հիմնավորումները, և բողոքին միանալու ինստիտուտն ընդհանրապես իմաստազրկվում է այն առումով, որ եթե սկզբնական բողոքում ներկայացվել է որևէ պահանջ, որում առկա են նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ որոշակի հիմքեր և հիմնավորումներ, ապա անկախ այն հանգամանքից, նույն կողմում հանդես եկող դատակիցը կամ երրորդ անձը կմիանա բողոքին, թե ոչ՝ վերաքննիչ դատարանի որոշման իրավական հետևանքներն ընդհանուր են: Ընդ որում, սկզբնական բողոքին միանալու ինստիտուտի էությունից բխում է, որ եթե դատական ակտը բողոքարկվել է կոնկրետ մասով, ապա միանալու հայտարարությունը չի կարող վերաբերել բողոքարկված վճռի այլ մասի, քանի որ հակառակ պարագայում կխախտվեն վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի օբյեկտային սահմանները:

Միանալու միջոցով դատական ակտի բողոքարկումը որոշակի իմաստ ունի միայն եռաստիճան դատական համակարգի գործունեության պայմաններում, երբ դատակիցը կամ երրորդ անձը ցանկանում է իրեն ապահովագրել վերաքննության հետևանքով կայացվող որոշման բացասական հետևանքներից, միաժամանակ ապահովել վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը: Այսպես, ՀՀ ՔԴՕ 224 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտը անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Ուստի, դատակիցը կամ երրորդ անձը, երկյուղելով, որ սկզբնական վերաքննիչ բողոք բերողը հնարավոր է դատական ակտը վճռաբեկության կարգով չբողոքարկի, կարող է սկզբնական բողոքին միանալու հայտարարություն ներկայացնել: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 1964 թ. ՀՀ ՔԴՕ-ն գործում էր երկաստիճան դատական համակարգի պայմաններում, ինչն ընդհանրապես արժեզրկում էր այս ինստիտուտը: Գտնում ենք, որ ՀՀ օրենսդիրն իրավացիորեն է հրաժարվել բողոքին միանալու ինստիտուտից, ինչը որոշակիություն է մտցնում վերաքննիչ բողոքարկման և վերաքննության ընթացքում դատավարական հարաբերությունների կարգավորման հարցում. ստիպում է, որ դատավարության մասնակիցները բարեխղճորեն օգտվեն իրենց իրավունքներից, օրենքով սահմանված ժամկետներում և կարգով կատարեն անհրաժեշտ դատավարական գործողությունները: Եթե գործին մասնակցող անձն օ-

րենքով սահմանված կարգով չի իրականացնում իր բողոքարկման իրավունքը (հաշվի ենք առնում նաև հարգելի պատճառով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու ինստիտուտը), ապա պետք է կրի իր անգործության բացասական հետևանքները: Ավելին, եթե բողոքին միանալը ենթադրում է սկզբնական բողոքի պահանջի, հիմքերի և հիմնավորումների ընդունում, ապա վերաքննիչ դատարանի որոշման իրավական հետևանքների օբյեկտային և սուբյեկտային սահմանները նույնանում են և հավասարապես վերաբերում են նաև վերոնշյալ անձանց:

Կարող ենք ասել, որ ՀՀ ՔԴՕ նորմերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու **անհատական, համատեղ և հանդիպակաց** վերաքննությունները: Վերաքննությունների այս տեսակների տարանջատման հիմքում ընկած են քաղաքացիական գործով կայացված դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքների առարկայական և օբյեկտային առանձնահատկությունները, այն է՝ համատեղ վերաքննությունն առկա է բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի քննությանը ներկայացված բողոքները պարունակում են նույն պահանջը, թեև բողոքի հիմքերն ու հիմնավորումները կարող են տարբեր լինել, իսկ հանդիպակաց վերաքննության պարագայում այդ պահանջները պետք է տրամաբանորեն հակասեն և բացառեն միմյանց:

**ВАГЕ ОГАНЕСЯН – Проблемы совместной апелляции в гражданском процессе РА.** – Рассмотрение в апелляционном суде двух и более апелляционных жалоб по гражданским делам порождает ряд вопросов. Закон о судопроизводстве РА допускает совместное рассмотрение более одной апелляционной жалобы, причём не имеет значения, идентичны представленные в жалобах требования либо исключают друг друга. Правовые последствия решения апелляционного суда распространяются и на субъекты, которые представили в жалобе, отклонённой судом, идентичное либо другое требование. Совместная апелляция выделена в качестве самостоятельного вида апелляции. Помимо того, исследование законодательства РА опровергло существование начальной и главной апелляции, исключив её теоретическое и практическое значение.

**VAHE HOVHANNISYAN – The Issues of Joint Appeal Hearing in the Civil Procedure of the Republic of Armenia.** – The issues of joint review of two and more appeals of civil cases are discussed in the presented article. The analysis of the problem has revealed that RA Civil Procedure Code does not preclude the combined review of appeals, moreover, even in the cases when the claims indicated in the appeal are identical or exclude each other. Therefore the legal consequences of the decision of the Court of Appeal are general and have an effect on entities having different or identical claim dismissed by the court. On the basis of aforementioned the joint review in the Court of Appeal is distinguished as a unique type of appeal process having in regard the need of joint appeal hearing of participants' appeals. Additionally, as a result of analyzing Armenian legislation the existence of primary and main appeal, consequently their theoretical and practical significance has been declined.